

# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՔԱԶԱՐԱՆԻ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

20.08.2023



Քաջարանն այսօր տոնում է իր հիմնադրման 65-ամյակը, որի առիթով շնորհավորում ենք քաջարանցիներին ու բոլոր այն մարդկանց, որոնց համար երկրորդ հայրենիք է այն, որոնք աշխատում և ապրում են այս քաղաքում:

Կարող է թվալ, թե քաղաքի կյանքում փոքր ժամանակահատված է 65 տարին. այո՛, երիտասարդ է Քաջարանը, բայց այն դերը, որ ունեցել է այս «քաղաք-ձեռնարկությունը» Հայաստանի տնտեսության զարգացման մեջ, հսկայական է: Իսկ դրա հիմքում քաջարանցիների անխոնջ աշխատանքն է ու նվիրվածությունը հանքարդյունաբերական գործին:

Մակայն պետք է փաստել, որ Քաջարանը վաղուց արդեն դուրս է գուտ հանքարդյունաբերական քաղաք լինելու՝ տասնամյակների ընկալումից: Այն նաև իր ուրույն մշակութային, սպորտային, կրթական դեմքն ունեցող ու այս ոլորտներում ևս ավանդույթներ հիմնող քաղաք է:

Տոնի կապակցությամբ շնորհավորում ենք բոլոր նրանց, ովքեր ներդրում ունեն Քաջարանի կառուցման ու զարգացման գործում:

Վստահ ենք, որ քաղաքն ունի մեծ հեռանկարներ, իսկ նրա աշխատասեր ու հոգատար բնակիչները՝ լայն հնարավորություններ՝ ամենախիզախ ծրագրերի իրականացման համար: Թո՛ղ, որ բազում տարիներ գումարվեն 65-ամյա այս տարեգրությանը, ու Քաջարանը դարերով շարունակի իր անխախտ ընթացքը:

**Շնորհավո՛ր ծննդյանդ օրը, Քաջարան՝**